# Բացատրագիր

Լոռու մարզի Գյուլագարակ գյուղի մանկապարտեզի շենքի կառուցման նախագիծը կատարվել է ՀՏԶՀ-ի NTPD-07, TLR-03 պատվերով՝

Նախագիծը կատարվել է նախագծային առաջադրանքի, ճարտարապետա-հատակագծային առաջադրանքի, համապատասխան տեխնիկական պայմանների, պատվիրատուի կողմից տրամադրված գոյություն ունեցող հիմքերի տեխնիկական վիճակի մասին եզրակացության,«Գլոմմա» ԱԿ-ի պատվերով մշակված տարածքի երկրաբանական պայմանների մասին եզրակացության, նաև սեփական հետազոտությունների և չափագրությունների հիման վրա:

Մանկապարտեզի շենքը նախատեսվում է կառուցել գոյություն ունեցող բետոնյա հիմքերի վրա:

Տեղամասը գտնվում է գյուղի արևելյան մասում, գյուղի ասֆալտապատ ճանապարհից մոտ 300մ հեռավորության վրա:

Տեղամասը քիչ թեքությամբ հարթ է:

Գոյություն ունեցող հիմքերը հատակագծում T-աձև են 37.5x25.5մմ գաբարիտային չափերով: Հիմքերը բետոնյա են, հիմքերի գետնախարսխային մասը բարձրանում է հողի մակերևույթից 1.7-2.1մ: Հիմքերի վրա տեղադրված են բազմանցք ե/բ սալեր, որոնք տեղ-տեղ բացակայում են: Հիմքերի երկար հատվածը ունի 36.9x12.2մ առանցքային չափեր, իսկ միջին մասում ելուստաձև տեղադրված հատվածն ունի 12.2x12.9մ առանցքային չափեր:

Նախագծով նախատեսվում է նոր ե/բ կմախքով մեկ հարկանի մանկապարտեզի շենքի կառուցում, օգտագործելով գոյություն ունեցող հիմքերը: Հիմքերի վերնամասերը և առկա անցքավոր սալերը քանդվում են: Շենքի մեկ հատվածը (ելուստային մասի շարունակության վրա, 6.85մ երկարությամբ) նախատեսվում է կառուցել նոր հիմքերով:

Շենքի ծածկերը միաձույլ ե/բ սալերից են: Արտաքին պատերը երկշարք կանոնավոր ձևի տուֆի քարից են, ինքնակրող, արտաքին կողմից ջերմամեկուսացված և սվաղված: Տանիքը լանջավոր է մետաղակղմինդրե ծածկույթով: Միջնորմները թեթևաբետոնե սալերից են:

Մանկապարտեզը նախատեսված է երեք խմբակի համար՝ մինչև 90 երեխա: Նախատեսված են երեքական ննջասենյակ, խաղասենյակ, սպասքի լվացման սենյակ: Նախատեսված են նաև սանհանգույցներ, խոհանոց, պահեստ, բուժկետ, մեկուսարան, լվացքատուն, բազմաֆունկցիոնալ նախասրահ, առանձնասենյակներ:

Հատակները նախատեսված են մամլո-գրանիտե սալերից և վինիլային: Արտաքին դռները ալյումինե են, ներքին դռները ՄԴՖ-է, լուսամուտները՝ մետաղապլաստե:

Շենքում նախատեսված է ջեռուցման լոկալ համակարգ, ավտոմատ տուրբո կաթսաներով:

Նախատեսվում են ջրամատակարարման, կոյուղու և գազամատակարարման արտաքին և ներքին ցանցերը: Կոյուղաջրերի հեռացման համար նախատեսվում է

նոր լոկալ մաքրման կայան: Նախատեսվում են օդափոխության, ներքին էլեկտրասնուցման և հակահրդեհային ազդանշման ցանցեր:

Նախագծով նախատեսվում են բարեկարգման աշխատանքներ՝ շենքի պարագծով բազալտե սալերի բեկորներից ծածկով («բրեկչա» տիպի) սալվածք, ասֆալտապատ ճանապարհներ, բետոնյա սալիկներով շարված («տոմետ» տիպի) անցուղիներ, ավազե ծածկով խաղահրապարակ: Տարածքը ցանկապատվում է:

| «Ճ» մակնիշի գծագրերի անվանացանկ | | |
|---|---|---|
| **№** | **Անվանումը** | **Մակնիշը** |
| **1** | Բացատրագիր, գծագրերի անվանացուցակ | Ճ-1 |
| **2** | Գլխավոր հատակագիծ Մ1:500 | Ճ-2 |
| **3** | Տարածքի հանույթ Մ=1=500 | Ճ-3 |
| **4** | Հարկի հատակագիծ, +0,10 նիշում | Ճ-4 |
| **5** | Հողային աշխատանքների քարտեզ, Մ1:500<br>(Ուղղաձիգ հարթեցում) | Ճ-5 |
| **6** | Ներքին հարդարման աշխատանքներ և ծավալներ | Ճ-6 |
| **7** | Դռների պատուհանների և հատակների մասնագրեր | Ճ-7 |
| **8** | Ճակատներ «Ա-Ը» և «1-8» առանցքներով | Ճ-8 |
| **9** | Ճակատներ «Ը-Ա» և «8-1» առանցքներով | Ճ-9 |
| **10** | Կտրվածքներ «1-1», «2-2», հանգույց «1» ալյումինե բազրիք, | Ճ-10 |
| **11** | Սանհանգույցների հատակագիծ, կտրվածքներ | Ճ-11 |
| **12** | Բարեկարգման աշխատանքների ծավալներ, կտրվածքներ | Ճ-12 |
| **13** | Միջնորմների կառուցման ձև | Ճ-13 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ԳՅՈՒՂԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՇԵՆՔԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ | | | | | |
| | î Üúð º Ü | Ø³ Ý³ ëÛ³ Ý | | Ö² ðî ² ð² ä º î à ô Â Úà ô Ü | Âí³ Ï³ Ý | |
| | Ü² Ê² ¶ Ì º ò | ² Ê»ùë³ ÝÛ³ Ý | | | 2016 | |
| | | | | Բացատրագիր, գծագրերի անվանացուցակ | öà ôÈ | ² .Ü. |
| | | | | | Âº ðÂ Ճ1 | |
| «ԳԼՈՄՄԱ» ԱԿ | | | | | Ö-11 | |